# ԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

| Թիֆլիս | Գուբառամամ | Առառամամամ |
|---|---|---|
| Տարեկան 6 ր. | Տարեկան 7 ր. | Տարեկան 32 ֆր. |
| 1/2 տարին 3 ր. 50 կ. | 1/2 տարին 3 ր. 50 կ. | 1/2 տարին 16 ֆր. |
| Ամսական 60 կ. | Ամսական 70 կ. | Ամսակ — 3 ֆր. |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ.

Վերջին է առաջին երեսում խրատանիշը տողն 6 կոպեկ, իսկ վերջին երեսում 3 կոպեկ։
Մեծ և տեղական յայտարարութիւններ առանձին պայմանով։
Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունւում են I երեսում—20 կոպ. իսկ վերջին 10 կոպ.

Խմբագրութիւնը բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին ցերեկ 12—2 ժ.

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Ծէրլիխսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Алика", Фрейлинская, № 6. Кмг Rédaction „Alik" Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 67 ՀԻՆԳՇԱԲԹԻ 20 ՅՈՒԼԻՍ 1906 Թ. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1906 Թ. ՀԻՆԳՇԱԲԹԻ 20 ՅՈՒԼԻՍ № 67


„ԱԼԻՔ"-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.


## Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Ազգային Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձու՝ իւրը

հրաւիրում է նոյն դպրոցի համար

## ՏԵՍՈՒՉ

հետեւեալ պայմաններով.—տեսուչը առանձին է տեսչական ոճիկի տարեկան 2400 րուբլի, չաքսիական 6 դասից ոչ աւելի դասատուութիւն ունենալու է եւ օգնական 8 ծխագործները պէտք է դիմեն հոգաբարձութեան մինչեւ յուլիսի 25-ը։
372 3—2

## Ա. եւ Ե. Գէորգեանների եւ Կ. Աւետիքեանի Ընկերութեան

խանութից, Երեւանում ԳՈՂԱՑԻԱՆ ԵՆ ԵՐԵՔ ՄՈՒՐՀԱԿՆԵՐ, որոնց դուէտարները լիովին վճարել է ընկերութեան ադամ Ե. Գէորգեանը Մօսկուայում մուրհակաւէրերին և որոնց վրայ արւած են անվերադառնալի մակագրութիւններ (безоборотная надпись) հետեւեալ Մօսկայի ֆիրմաների. 1) Ի. Գ. Կօկուշկին, 1500 ր., ապրիլի 4 ից 1905 թ.—առ 1 ն մարտի 1906 թ., միւս երկուսը Բայանդուրի Մանուֆակտուրային Ընկերութեան, որոնցից 1) 5000 ր.—մարտի 21-ից 1905 թ. առ 27-ն դեկտեմբերի նոյն թւի և 2) 3980 ր. 10 կ. մարտի 29-ից 1905 թ. առ 1-ն մայիսի 1906 թ.

Վերոգրեալի մասին մեր ընկերութիւնը յայտնում է ի գիտութիւն հիմնարկութիւնների և անձանց։ Յայտնած է եւ ոստիկանութեան և ուր հարկն է։ Զնչած է «որի» «մասին» չը կորզալ։
382 3—1

## ՀԱՅԼՀԱՐՐԻ ԹԱՏԵՐՈՆ

Հինգշաբթի, յուլիսի 20-ին 1906 թ.
Հայ դերասանական խրճի անդամները մասնակցում են տեղական սիրողների
կը ներկայացնեն
I
**Մարդոց Ձրագներ**
Պիէսա 3 գործող. հեղ. Ա. Աբելեանի.
II
**ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ**
Վեդվիլ 2 գործողութեամբ փոխ. Ա. Վրայրի.
Մասնակցում են տ.տ. Ազնիւ, Մարգարեան, պ.պ. Աչդանեան, Բերդեան, Բարսեղեանեան, Լազարեան, Ռ. Հիկեան և ուրիշ.
Սկիզբը ճիշտ 8½ ժամին։
Յաղագիրջոցներում կը նկատէ երաժշտական խումբը։

## ՀԱՅ ԶԱՒՈՐ ԵՐԿՈՒՒՀ ԴԱՐՈՒՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԻԱՒՈՐ ԵՆ

1) **Մի աւագ ուսուցիչ** — որ լինի ամուսնացած, չաքսիական 18 դասի և աւագ ուսուցչութեան համար առանձին է 1100 ր.
2) **Մի հմուտ երաժշտագէտ,** որ դասաւանդելու է երգեցողութիւն և ասորհներ. Նաև վարելու է հեկեղեցիներում խմբավարի պաշտօն։ Ռոճիկ չաքսիական 15 դասի և խմբապետութեան համար 850—900 ր.
3) **Հարկաւոր են 8 ուսուցիչ** (որոնց մեծ մասը երկու ուսուցչուհի), իւրաքանչիւրը չաքսիական 18—22 դասով։ Ա.անդելի առարկաները են՝ հայոց և ռուսաց լեզուները, քերականութիւն, վարչական գործարութիւն, ձեռագրի և կար. ու ձևի։
Լեզուների և քերականութեան դասագիրն է 40 րուբլի, Միացեալ առարկաները—35 ր.
383 3—2

## «ԵՒՈՎՏՈՐԻԱՅԻ (ՂՐԻՄ) ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՐ ՆԵԱՂԱՒ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր է

## ՄԻ ՑԵՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒԻՉԻ

Դասաւանդելու է բոլոր առարկաները (և երգեցողութիւն), 24 դաս չաքսիական, քառասունհինգ ուսուցչութիւն։ 500 րուբլի տարեկան ռոճիկ, ընակարան եւ վառելանիւթ (15—20 սաժէն)։
Հասցէ՝ Евпаторія, Тав. губ. попечителю Е. С. Кушнареву.
367 5—4

## Մի հայ մանկարարձուհի

Աւարտած նոյն գիմնազիա, ցանկանում է զբաղուել ԱՂՈՂՋԱՀԱ ՀԱՑ ԳԻՒՂԵՐՈՒՄ մէկ կողմ։ Համաձայն է նաև օրական 2 դաս ունենալ գպրոցում. Դեղատոմսով է լինել Երեւանի նահանգի գիւղերից մէկում։ Խնդիր՝ Желѣзноводскъ, до востребованія, Акушеркѣ Хазбекянъ.
353 3—3

1906 Թ. յուլիսի 7-ին բացւեց Դպրեվանական Արվարտը (Անդրկասպեան)

## „ԱԱՄՈՆ"

ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ,

որի մասին պատիւ ունինք յայտարարելու մեզ հետ գործ ունենալ ցանկացող օտարազգացիներին։
Տնօրէններ՝ Ֆ. Ս. Գասպարեանց և Ալ. Ե. Յարութիւնեանց
379 4—2


Թիֆլիս, 19 յուլիսի

Դաւման փակւեց.

**ՄԱՆՆԵԶՐՆԵՐԸ** Ժողովուրդը պատասխանից այդ բիրտ քայլին զայրացած ու խորհրդարար լուսաբեամբ կառավարութեան սպասած և գուցէ խիտ ցանկացած յուզումների բռնկումը տեղի չունեցաւ։ Ներքաշ, սառնասրտութեամբ սրտխիթ կացութի ենթարկած ժողովուրդը չը կամենում էլի մի անգամ կառավարութեան խաղը խաղալ։

Նա սպասում է... բայց առաջները կրճատոցով և բռունցքը սրմած չդաձգարար։

Ռուիկանական և զինւորական սանձարձակութիւնների տակ իշխող այդ առերեսի «վարչապետութիւնը» սակայն, շռայլում է շահագործել Մօսկիսը։

Սկսել է մանեւրների շրջան։ Մանեւրը երկրի ներսում և մանեւրը մանեւրանդ գրամ, քաղաքական ու քաղաքակիրթ աշխարհներում։

Երկրի ներսում հաճոյախաղ ու սուդուն թերթերը, գլուխ ունենալով «Россіянинъ», մերթերն թմբրուկ են զարկում մի կողմից վարկաբեկ անելու Դուման և նրա գլխաւոր վարիչներին ժողովրդի աչքում և միւս կողմից աշխատում են հաւատացնել, թէ կառավարութիւնը պատրաստում է «լիբերալ» ծրագրեր, որոնց իրագործումը կը բախտաւորեցնի ամբողջ Ռուսաստանը։

Եւ ժողովուրդը դարձեալ լուռ է, մտայլ, յոնքերը կախ։ լուռ է և սպասում է... յամենայն դէպս ոչ Մօսկիսնի խոստումների իրագործման, որոնց արժէքը պէտք անցեալ հոկտեմբերից նա շատ լաւ գիտէ, և ընաչ կարիք չունի նոր փորձեր անելու։

Մանեւրների նան դրսում։

Ռուս կառավարութիւնը պատրաստում է, ինչպէս հաղորդում են Լօնդօնից, շրջաբերական յայտագիր պետութիւններին ուղղած՝ որով նը բացատրւի Ռուսական արձակման պատճառները և կը ջնջուի Թէ ժողովրդական ներկայացուցչական սկզբունքը Ռուսաստանում այսուհետև էլ կը պահպանւի անխախտ։

Միևնոյն ժամանակ Պարվի վաճառուղ թերթերը à la «Ֆիգարօ» լիքն են առասական բարձր շրջանններից ծագող կիսապաշտօնական տեղեկութիւններով, հեռագրական ինտերվիւներով, որոնց բոլորի նպատակն է հանգստացնել հասարակական կարծիքը և բիրժայի խուճապը մեղմել։

Մասնաւորապէս «Ֆիգարօ»-ն, գիտակցական այդ «Нов. Время»-ն դիմիքմարները է նկրում այն «պատասխան»-ը, այն «նամակը» ծրագրին, որ ռուսական ժողովուրդներին մոքեցող կամարկման պատրաստել է «հայրական խնամատարութեամբ»։

Եւ այսպէս՝ Մօսկիսը գործում է։ Նա փորձում է հաւատացնել գաղջելի Գրիմդամասների և Սուվօրինների բերանով, թէ Դումայի անդամները կիսախելագարները էին, ժողովրդի և պետութեան թշնամիներ, որոնց անշրաժեշտ էր հաւաքել, որպէսզի կառավարութիւնը կարողանայ առաուածեան եղջիւրից թափել այնքան ապաւած ապառութիւններ ու բարիքները։

Եւ արդէն տեսնում ենք այդ խոստումների պտուղները. պետրօմների բանկիզը Օդեսայում, երկիլը՝ ամէն տեղ, թերթերի խափանումի բոլոր քաղաքներում, բանաւորութիւնների ամէն օրեր, զինւորական խստութիւնները աւելի քան երբեք, թուրքական հորդաների միաճամուռ շարժում մեր երկի մի քանի կէտերում, ընչպէս Նուշի, Ջանդրեայ։

Ահա Մօսկի պինի «պատասխան ծրագրի» պիտիքը. ինչ կը լինի, եթէ նա ևս սպառնալիքն իրագործի և ամբողջ ծրագիրը գործադրութեան մէջ դնի համայն Ռուսաստանում։

Ուրախալի է նշմարել սակայն, որ այդ մանեւրներն ի դերև են ելնում ոչ միայն Ռուսաստանում, ուր գնահատիչ ժողովուրդ Թուման լուսաբեամբ է պատասխանում այս նոր միամիտիկային, այլ և արտաս ոհմանում, ուր նոյն իսկ այնպիսի չափաւոր Թերթեր, ինչպէս «Matin» և «Temps» հեղնում են Մօսկիսնի նենգ հաւատասպատումները։

[illegible] ընդդէմ արշաւքը չարձակում. անպէական, նոյն իսկ զերմանական մաքուր օրգաններ խօք չեն դնում նշմարելու կառավարութեան այս անդակելի ընթացքը, ժողովրդի համբերութեան հետ սկած այս նոր ու վտանգաւոր խաղը. բայց մանեւրները շարունակւում են։

Մօտիկ գուցէ և շատ մօտիկ ապագան ցոյց կը տայ, Թէ ինչ է նշանակում 150 միլիոն մի ժողովրդի հետ վարել, ինչպէս անասուններ մի հօտի հետ։

Պատուհիքը Մօսկիսնիները չեն դարընում, այլ մասնաւորը։

Մօսկիսնիները իրենց «լիբերալ» ծրագիրներով, իրենց անվերջ մանեւրներով միայն գերեզմանափորներն են բռնապետութեան։

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

—

Ով որ աշխատում է յուսադել պատմական մի ակտ, որով ժողովրդին յետ են տուելու նրա իրաւունքները, նա դիտմամբ կամ պատմամբ՝ ժողովրդի շահերի դէմ է գնում, որովհետև յետադարձը նշանակում է դարձնում խափանման ծառայ։

Եթէ հոկտեմբերի 17-ի հրովարտակով Նիկոլայ կայսրը սահմանորեց Ժողով Դումայի այս տարւայ յունիսի 1-ին և ընտրութիւնը որոշեր անել եռանդամ սխեմայով և կանոնց մանակարգութեամբ քան որ ուղղակի, այլ երկասիճան, յայտարարելով, որ այդ անւում է միմիայն ժամանակի կարճութեան պատճառով, ռուս յառաջադիմականների մէջ չէր գտնւիլ և ոչ մէկը, որ յանուն ընտրութիւնների կանոնաւորութեան պահանջէր յետաձգել սահմանադիր ժողովը, լաւ հասկանալով, որ գրանով նա միայն ջուր կաձէը Գրիմդամասների ջաղացի ակի վրայ։

Մեզնում այդպէս չէ։ Մեզնում գանւում են յառաջադիմականներ, որոնք պահանջում են, որ մեր ազգային սահմանադիր ժողովը յետաձգւի մի քանի ամսով, միևնոյն ժամանակ մի քիչ պարզէի և ժողովուրդը կարողանայ կանոնաւոր ընտրութիւններ անել ու նախապատրաստել սահմանադիր ժողովի ենթակայ լուրջ հարցերը ինչպես հարկն է քննելու և լուծելու։

Դանդաղ նոյն իսկ մեզը, «Մուրճ» ամսագրի խմբագիր պ. Լեոն Սարգսեանը, որ պնդում է, Թէ պէտք է սահմանադիր ժողովը յետաձգել մինչև որ Դաշնակցութիւնը ոչնչանայ կամ հիմնովին կերպարանափոխւի։ Ըստ պ. Սարգսեանի, ուսած դեղատոմսով։

Մենք ասիք կուննանք խօսելու պ. Սարգսեանի սխալ հակաբանչակական արշաւանքի մասին, ուսոի այստեղ մի ըոպէ ենթադրենք, Թէ ապրի չարը պահանջում է, որ Դաշնակցութիւնը ապաքէշից իշնի, կամ գոնէայ մասնական կամ առանձին մշակման։ բայց չէ որ դա համար անհնարինը տարիներ են հարկաւոր, Թէկուզ Դաշնակցութեան մուրճական և մշակական տեսչութիւնները մի գլխի տակ տասը գլուխ ունենան։

Իսկ պ. Սարգսեան առաջարկում է եկեղեցական-վարչական բոլոր ընտրախոհներին օրենսդիր, առաջնորդների և լուսորների ընտրութիւնը յետաձգել մինչև սահմանադիր ժողովը։

Այդպէս, ուրեմն, եթէ հետևենք պ. Լեոն Սարգսեանի խորհրդին, ամէն բարեփոխութիւն մեր եկեղեցական-վարչական գործերում և նրանց հետ կապած գուս-ազգային երևոյթներում պէտք է յետաձգել մի քանի տասով, անձերիմութեան Քողնելով status quo-ն, ներկայ վիճակը։

Բայց եթէ նոյն իսկ ենթադրենք մի րոպէ, որ պ. պ. Լեոն Սարգսեանի և Համբարձում Առաքելեանի յօդուածները մի քանի ամսում կը յանկարծ կամէ կը կերպարանափոխեն Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ չի կարելի համաձայնել, որ սահմանադիր ժողովը յետաձգուի, որովհետև ոչ ոք չի կարող երաշխաւորել, որ այդ ժամանակահատուածում չեն կատարելի էլեմիածնում այնպիսի փոփոխութիւններ՝ անձի կամ տրամադրութեան և կամ տեղի չեն ունենալ այնպիսի միջամտութիւններ զրսից, որոնք անհնար կը դարձնեն սահմանադիր ժողովի գումարումը կամ կազմելու նրա էութիւնը։

Անտագնել՝ կը նշանակէ խափանելու հնարաւորութիւն տալ հակառակորդներին. ուսոի ով չի ուզում խափանել՝ նա միայն Թիւրիմացութեամբ կարող է յետաձգելու պահանջ անել։
Տ. Ե.

## ԱՆՏԵՂԻ ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔՆԵՐ

—

Որպէսզի կատարելագործ պարզւի, Թէ ինչ աստիճան անտեղի տարակուսանքներ են ծագում բողոքողների մտքում, բերեմ մի օրինակ։ Մի քաղաքներն հարցնում են. «Եթէ կենսրական ժողովը մի Սէնոյի անդամի կամ մի առաջնորդի պաշտօնից արձակում է, իսկ պետութիւնը (համաձայն է հարկէ, Թէ նա խաձնեցնում է) չի կամենում արձակել, ընդհակառակը է մէկէն, պետութիւնը չի հաստատում, ինչ կը լինի այդ դէպքում ընդհատի կամ արձակածի նոցա վարած գործերի վիճակը։ Ինչպիսի շփոթութիւններ ու խանդարումներ յառաջ չեն։ այս տեսակ երեկոյի կացութիւնից։ Նաև որ կենաց. Ժողովը միայն Սէնոյի անդամներին է նշանակելու ու արձակելու (և հարկէ կայսրի պատասխանը հաստատմամբ) քիմական ժողովներին են հանդիսանալու Սրկոտոր, ինչու են միամտները կարծում, որ եթէ պետութիւնն իմանայ, Թէ «ձրագիրը» է Սէնոյի անդամին արձակելու ճնշանաձնութիւնը, այսինքն ժողովրդից է, անպատճառ ընդդիմանալու է, հետաքրքրական ու խիստ ընդոյ է բողոքողների դատելու այս ձևը։ Գալով է, որ Ալեքսանդր III-ի ինքնակրատական ժամանակին հակաժողովրդական աչքով են նայում կառավարութեան վրայ։ Բայց միամիտ եղէք, անցան այդ ժամանակները, և քէ ներկայումս, քէ ապագայում ընդհանուր աւելի կրիտ է ունենալու պետութեան աչքում ժողովրդի ընտրած Քեկիածուն։ Վերջապես, գալով բան տարակուսանքին, ես մի հարց կը տամ բողոքողներին՝ «Ենթադրում էիք էք լինում, երբ կամուղկոսը այս կամ այն պատճառական եպիսկոպոսին կամ վարդապետին առաջարկում էր պետութեան հաստատել որև է պաշտօնում կամ արձակել, իսկ պետութիւնը չէր արձակում կամ հաստատում։ Առանձին ոչինչ. յամենայն դէպս ջրտեսութիւնները ու խանդարումները չէին ծագում։ Այնպէս էլ այժմ կինար. ժողովը կընտրէ երկու Քեկիածու Սէնոյի անդամութեան համար, և Վեհափառը կը ներկայացնէ պետութեան է հաստատութիւն։ Զի կամենայ կայսրը հաստատել կինար. ժողովը ուրիշ Քեկիածուներ կընտրէ, և վեհափառը սրանց կը ներկայացնէ. Աւելի հեշտ է պաշտպել հրամայելիքը։ Սրբ կենսրական ժողովը Սէնոյի անդամներից մէկին իւր անվստահութիւնը կը յայտնէ, կամ ուղղակի պաշտօնից արձակելու վեհիս կը կայացնէ, վեհափառը կը դնէ՝ կայսրին՝ դրան պաշտօնից արձակած համարելու համար։ Եւ պետութիւնը ընակնաբար միշտ աւելի հետաքրքրութեամբ ընդունում է մէկէն հրամայելը քան պաշտօնի նշանակելը։ Մանաւանդ որ իրքը պաշտօնից արձակուն էլ կամ ինքնաբերաբար, կամ Թէ չէ կաթուղիկոսի Թելադրութեամբ, արդէն դէպքերում միշտ իւր հրամայականը կը ներկայացնէ. իսկ եթէ չի հրամարուի և կաշխատի «երկպիղծ» քաղաքականութեան հետևել ժողովուրդը մէշտ ասպ աւելի հաւատաց միշտնոյնը ունի գործադրելու։

Վերջացնելով յօդուածս, չեմ կարող մասնագոյց չասել, որ մխալանների գլուխը սակ բողոք չէ, այլ նաև վերատրանք Թէ Վեհափառ կաթուղիկոսի և Թէ ամբողջ առասաւոյ ժողովրդի հասցէին։ Ես չեմ հասկանում, Բնչպէս կարող էին այդ մխալանները այնքան գլուխները կորցնել, որ կաթուղիկոսի առմնամած կենսրական ժողովը հաւատ չդասողների համար անհասկանալի ձևանարկութիւնս, եկեղեցու համար փոքրամասնութիւն անհասնել։ Եթէ այդ մխալանները կարծէքով կենսրական ժողովի իշխանութեան ենթարկելը հոգեւորական համար ուրիշ բան չէ, բայց եթէ հասարական խնամատարութիւն, հասարացնիչ պայմաններ, որոնք իրը եմ սահմանելու են նրան հետևական պատի զարմանալի գործելութեան, ապա ինչ պատասխան պիտի տայ այս մխալանդրիչ նոյ հասարակութեան։

Բողոքող մխալանները մի կուսական պարզամասնութեան՝ բարկացած տալանափառ են յայտնում, Թէ պատհասան էլ ենք անպէաք ու անպատիւ հայը կը յօժարի հոգեւորական դառնալ... Ո՞վ չը գիտէ, որ անհնչաք ու անպատիւ հայերով մեր հոգեւորական գասը լցուել է հէնց հին հոգեւոր կարկիր շրջրին. և ա. պատյ ժողովրդական կալուածը ամենամեծ գործերից մէկն էլ մեր հոգեւորականութեան կազմը մաքրելն է լինելու։

Ս. Տէրտերեան

## «Մ Շ Ա Կ Ի Ն»

—

«Quis'excuse, s'accuse»

Ձեզ համելի եղաւ ձեր բերիի էջերը լայն բաց անել, որպէսզի պ. Սարգսեան պատգարձի Դաշնակցութեան հասցէին։

«Մենք այդ ահաւեղերը զգական վատութեան։ Այժմ դուք «Մշակ»-ի № 152-ում արդարանում էք ասելով՝ Թէ դա «յանուն»-ն չէ, որովհետև պ. Սարգսեանի գրածը, ենամակ խմբագրութեան է։ Ձեր լսելիքում ուրիշ բաներ չկան, ամենադեհկի գործերում, ամենացնիչ գործերում շարել իրար կողքի և ընել ձեզ, դուք անպատճառ էք հերքելիք, միայն Թէ ճանապէս գլուխ լինեն մեզ համար։ Հարցնում ենք ձեզ էլ ևս ձեր ապագրական խօսքի մարդու-թիւնը, հասարակական ամօթխածութեան առաջ մի փոքր պատասխանատու։

Այդ իսկ մենք ոչ լինէր, եթէ որոշ բաղդատական տէր մարդիկ ոչ ցերեկով փողոցներում խօսա մերկ շրջէին հասարակութեան առաջ և բարձրանան վերոմշտութեան պատասխանէին, Թէ այդ նրանց առողջութեան է պահանջում։

Ձեզ ևս վհեն, եթէ դուք այդպես էք ըմբռնում հրապարակախոսութեան կոչումը։

Դաշնակցութիւնը ձեր բերիի էջերում անուանէց զրպարտութեան, ստապատիրեն, հեռնաապատանութեան, գաղտնակցականների հասչէին Թափուց այն բոլոր ապրը, որին ընդունակ է հայ մամուլի մէջ միայն պ. Սարգսեան անպատիւ դրիչը։

Երբեք մի որև է Ազգի կամ Քոմիտէական աւելի տգեղ նկար չէ գոռձանել այդ կապմակերպութեան դէմ։

Այն՝ ինչ որ չէին ասել Դաշնակցութեան երբեմն Քէնամիները, ասաց «Մշակը»։ Ասացը այժմ, այդ բոլորից յետոյ Մեզ անուն տանք ձեր հետևեալ տողերին.

«Մենք ասել ենք և ասում ենք ինքնապաշտպանման կատարած անձնական գործունէութեան փաստեր և խնդրենք ենք զոհերի առաջ...»

Դուք խնդրեցիք էք ինքնապաշտպանութեան առաջ, այո, բայց Սարգսեանի բերան նայ, այն ապատաւոյց չեայ...

Ոչ, պարոններ, անկեղծ եղէք, և թշնամի էք, բայց ճակատ եղէք, առելիք ունէք, դուք ասացէք։ Ձեր վարմունքի վատութիւնը միայն այն չէ, որ դուք թոյլ տուիք այդ գարշանքը Դաշնակցութեան հասցէին, այլ այն, որ դուք քաջութիւն չունէք աղնիւ թշնամի լինել, և ծածկւում էք զանազան Սարգսեանների աղբակոյտի յետևում։ Մերկութիւնը ծածկելու համար դա վատ թզենու տերև է։

Սա կրկնակի վատութիւն է։

Մենք աւելորդ ենք համարում պահանջել, որ դուք մի փոքր գոնէ յարգանք տածէք դէպի այն յեղափ. կազմակերպութիւնը, որ հայ ժողովրդի այսօրւայ ճակատագրական բեռը մեն մենակ է տանում իր տանջւած ուսերին։ Այո, մենք այդ ձեզնից այլ ևս չենք սպասում, բայց իրաւունք ունենք պահանջել, որ գոնէ լինիք աղնիւ, բաց ճակատ թշնամի և «զոհերի», «ինքնապաշտպանութեան» հասցէին ուղղւած բացականչութիւններով չը մոլորեցնէք դաշնակցական հասարակութիւնը։

Դուք հակադրում էք պ. Սարգսեանին Խաժակը, որ, ասում էք, ձեր հասցէին ծանր խօսքեր է ուղղել մեր թերթում։

Նախ յիշեցնում ենք ձեզ, որ Խաժակը ձեզ յետ է դարձրել ձեր ձեռքով իր պարտէզը ձգած քարը, ուրիշ ոչինչ։

Երկրորդ, եթէ դուք պ. Սարգսեանի կեղտոտ, ամօթալի գրւածքը հրատարակել էք վրէժխնդիր ոգուց թելադրւած, դիտաւորեալ ձևով Դաշնակցութիւնը ցեխոտելու համար, որովհետև Խաժակը ձեր մասին ծանր բաներ է ասել —էլ ինչու համար են այդ երկար բարակ բացատրութիւնները, «զոհերի», «ինքնապաշտպանութեան», «անձնւէր գործունէութեան» յիշատակութիւն, Սարգսեանի «տեմպերամենտ, ձևակերպելու ձիրքը» և այլն։

Ո՛չ, պարոններ, ոլոր մոլոր ճանապարհներով խայթելը ոչ միայն արիութիւն չէ, այլ վատութիւն է։

Կրկնում ենք, թշնամի էք Դաշնակցութեան, եղէք, միայն բաց ճակատով ու համարձակ, և ասել, որ ինչպէս դուք էք ասում «շատ նիւթեր էք ունեցել ձեր ձեռին տեղական գործիչների մասին»։

Ասպարէզը բաց է. ձեր սպառնալիքից Դաշնակցութիւնը չի դողում։

Միայն թէ... աղնիւ։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԳԻՒՂԱՑԻՆ ԶՈՒՐԿ Է ՄՆՈՒՄ

Մեծ Ղարաքիլիսա գիւղ 16 յուլիսի

Երեկոյթներ... ներկայացումներ... երկուսն էլ կրթիչ դեր են կատարում ժողովրդի մէջ, նամանաւանդ մեր գիւղական աշխարհում...

Բայց դժբախտաբար խեղճ ու կրակ գիւղացին զրկւած է մինչև այդ բաւականութիւնից.

Երկու դէպքումն էլ փակ են նրա առաջ այդ բարոյական ու կրթիչ դռները...

Երկու դէպքումն էլ ստիպւած է նա պատուհանի ճեղքերից, դռների արանքներից դիտել ու լսել։

Նա ծառաւ է զգում, բայց այդ ծառաւը յագեցնող չը կայ, նրա միտքը զարգացնող չը կայ...

Ահա երեկոյթ է։ Դասախօսը առաջ է գալիս։ Խօսում է ոգևորւած, խօսում է իդէալի, սօցիալիզմի գաղափարի մասին, խօսում է նա միութեան, հաւասարութեան, կուլտուրայի մասին, և ամբողջ ժամանակ շեշտում է, որ աշխատաւոր ժողովուրդն է մեզ պէտք, որ նրան պէտք է զարգացնել, և նրա շահերը պէտք է պաշտպանել։

Բայց ովքեր են յարգելի դասախօսին լսողները։ Ի հարկէ ոչ աշխատաւոր ժողովուրդ. այլ նրանք, որոնք հէնց այնպէս ժամանակը սպանելու համար են եկել, որոնք կարողացել են մէկ ռուբլի վճարել...

Եւ երեկոյթ տւողները ուրախ են, որ մուտքը լաւ է եղել...

* *

Ներկայացում է։ Խաղում են «Կրեչինսկու հարսանիքը» պ. Արաքսեանի ղեկավարութեամբ։ Ծախում են գիւղացու համար անմատչելի, թանկ ու կրակ տոմսակները... Թէև երեսուն կոպէկանոց էլ կայ, բայց այդ երեսուն կոպէկանոց տեղը պէտք է կանգնել. ի հարկէ, այդ գիւղացուն, չքաւոր դասակարգին է միմիայն վիճակւած. բայց նա էլ ամաչում է իր ընտանիքի հետ կանգնել, տեսնելով իրենց մի քիչ ունևոր հարևանին կարգերում նստած... Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն է. և դժբախտ գիւղացին դարձեալ դուրսն է մնացել ու պատուհանների ճեղքերից է նայում... Լևոն

### ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ԼՈՒՐԵՐ

Բաքու, 13 յուլիսի

Քաղաքում լուր է տարածւել, որ ռուս «հայրենասէրները» անցեալ տարւայ նման ուզում են քաղաքում խաչով խաչվառներով մաղթանքից յետոյ ցոյցեր կազմակերպել։

Իսկ ինչ կը լինի դրա վերջը. այդ շատ լաւ գիտենք։

«Յեղափոխական հայերը ռումբ կը նետեն խեղճ, խաղաղ ռուս մարդկանց, խաչով խաչվառով գնացող և թագաւորի պատկերի վրայ, ու դա կը լինի մի կատարեալ պատուհաս թէ մեզ համար և թէ հէնց իրենց հայերի, որոնք...»—այդպէս է ասել մի ռուս խուլիգան իր մօտ ապրող թուրք բարեկամին, որը և շտապել է տեղեկացնել իր ծանօթ հայերին... Ռուս ասողը պետ. չինովնիկ է։

—Ախ այդ սօցիալիստները, որ ամենուրեք միանում են հայերին, աւելացնում է նա — դրանց էլ պէտք է զինուորների հրացաններով ու սւիններով մի լաւ կոտորել, որպէսզի խրատւեն...

Ահա [illegible] բիւրոկրատիկ չինովնիկի ասած մի քանի խօսքով, սխալմամբ, անկեղծ խոստովանումը, որից պէտք է նախազգուշանալ և շատ բան գուշակել։

Այդ է որ տեսան արդեօք, որ մի շաբաթից ի վեր ամբողջ քաղաքը և բացառապէս հայ մասը պահակ և զրահող զինուորներով լցւած է։ Առանց «խուզարկութեան» ենթարկւելու վաղ երեկոներից սկսած փողոցներով գիշերը չի կարելի անցնել. խուզարկում են մարդուն մինչև ամենաներքին ոտաշորը անգամ և շատ անգամ ու յաճախ էլ պատահում է, որ չը գտնելով ոչինչ տանում են խեղճ անցորդի գրպանից վերջին կոպէկները։ Ծառայող և բանւոր մարդը ինչպէ՞ս է մեղաւոր, որ իր հետ խուզարկելու ժամանակ չի ունենում ատրճանակ, որի փոխարէն խլում են տանում են նրա փողերը. և այդ, ընթերցող, ինչպէս տեսնում էք, պատժելու համար ինչպէս մի տուգանք։

—Կամ ատրճանակ, կամ փող—սա ինչ են ասում քաղաքում կարգ և խաղաղութիւն պաշտպանելու դուրս եկած ռուս զինուորները։ Գիշերւայ պահակները մեծամասնութիւնը կօզակ-պլաստուններ են մէկ ամիս ու կէս սրանից առաջ Թիֆլիսից եկած։ Յ.-ունի

### ՔՈՉՎՈՐՆԵՐԸ ԻՋՆՈՒՄ ԵՆ

Ղազախ-Քարւանսարայ, 17 յուլիսի

Ահա երկու օր է, ինչ թուրք քոչւորները իջնում են սարերից։

Մեր հարևանների այս վաղաժամ փոխադրութիւնը շատերին գցում է մտատանջութեան մէջ։ Մի քանիսը քոչւորների այս քայլը վերագրում են քաղաքական դրութեան անորոշութեան, որ վախ է ներշնչում թարաքեամաներին. «Պետերբուրգում ժողովւած 500 դէպուտատների կօզակները շրջապատել են—հաղորդում են մահմեդական հովիւները խորհրդաւոր կերպով. այնտեղ կռիւ է, գուցէ այստեղ էլ կռիւ լինի»...

Հաւանական, բայց վերադարձը արձագանք է Շուշւայ դէպքերին, որոնց լուրը յայլաղների վրայով անցնում է և մեր սարերը։ Միամիտ հովիւների վրայ երևի ազդում է և մի քանի հայ հովիւների «բարեկամական» խորհուրդները «հեռանալ սարերից», որպէս զի... նրանք կարողանան արածացնել թուրք քոչւորների արօտները։

Ընդհանրապէս վերցրած թուրքերը իրենց լաւ են պահում։ Չը նայած զանազան չարամիտ անհատների քարոզներին հայերին հաց չը ծախել. մեծամասնութիւնը պահում է մեզ հետ բարեկամական յարաբերութիւններ։ Թուրքերի մէջ պատահել են ներքին կռիւներ, պառակտումներ։ Նրանց մէջ եղած պառակտումները կապ ունեն թէ իրենց մէջ եղած տարբեր ուղղութիւնների հետ, թէ ինչ-որ Բաքւից ստացած դրամների, որոնք մի քանիների կողմից ծախսւել են ոչ թէ ընդհանուր պէտքերի (զէնքերի) համար, այլ ծախսւել են մի քանի բէգերի անհատական շահերին։

Թուրքերի աչքերը կամաց կամաց բացւում են։ Շատերը նրանցից զզւում են իրենց արած անմիտ քայլերի համար...

## ԼՐԱՏՈՒ

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 17 յուլ., 4 ժ. 5 ր.

15-ի գիշերը (լոյս 16) թուրքերն սկսեցին ամրացնել իրենց դիրքերը և գնդակոծել հայերի դիրքերը. հայերը ստիպւած եղան պատասխանել։ Առաւօտեան 7 ժամին հայերը ոչնչացրին թուրքական մի նշանաւոր դիրք—Դիկտանկուրսւի տունը. այդ դիրքի վերցման վրայ պնդել էին հայերը խաղաղութեան պայմանները մշակելու ժամանակ։ 3 ժ. երկու կողմի պատգամաւորները հաւաքւեցին խորհրդակցութեան՝ անմիտ գժտութիւնների առաջն առնելու համար։ Հայերից՝ սպանւած 6 հոգի, թեթև ու ծանր վիրաւորւած 35 հոգի։ Դիկտանկուրսւի թուրքական դիրքում գտնւած են 30-ի չափ դիակներ. Թուրք վիրաւորների թիւը յայտնի չէ։—Թուրքերը քանիցս յարձակւել են Ասկերանի՝ Խանքանդ, Խրամորդ՝ և Բաղալու գիւղերի վրայ, բայց միշտ էլ յետ են մղւել—Այսօր հանգիստ է։ Բանակցութիւնները շարունակւում են։ Սպանւած է Յարութիւն Տէր-Մարտիրոսեանը։ Բարսեղ

Շուշի, 15 յուլիսի

Թուրքերը փչացրին հեռագրաթելը. պօստը չէ վստահանում գնալ Աղդամի ճանապարհով։

Հայ ինքնապաշտպանութեան խմբից սպանւել են 12 հոգի, որոնց թւում ինքնապաշտպանութեան հաւանական ղեկավարներից մէկը՝ Աւետ Տէր-Մարտիրոսեան։ Վիրաւոր հայերի թիւը մինչև այժմ հասնում է 45-ի։ Այրւած են մօտ 200 թուրքական տներ։ Թուրքերն օգնութիւն են խնդրել Աղդամից և Ղարաբաղից։

Շուշի, 16 յուլիսի

Քաղաքում և գաւառներում կռիւը բռնկւել ու շարունակւում է։ Քաղաքում թուրքերն անյաջողութիւն են կրում. գաւառներում էլ նրանց յարձակումները յետ են մղւում։ Ըստ երևոյթին, կռիւը երկար է շարունակւելու։ Դրութիւնը ճակատագրական է։ Վ.

Գանձակ, 18 յուլիսի

Ասկերանից ստացւել են հետևեալ տեղեկութիւնները.

Ամսիս 12-ին Ասկերանի մօտ հաւաքւում են բազմաթիւ թուրքեր ու քրդեր, որպէսզի ճեղքեն ամրութիւնը բռնած հայերի շարքերն ու անցնեն Շուշի։ Մի քանի օր շարունակ գործող յարձակումները միշտ յետ են մղւում։ Ասկերանը մնում է հայերի ձեռքին։ Կռիւը մինչև այժմ էլ շարունակւում է։ Յարձակումներ լինում են նոյնպէս Խանքանդ, Խրամորդ հայ գիւղերի վրայ, բայց դարձեալ յետ են մղւում։

Եւլախից Աղդամ ամբողջ գիծը թուրքերի ձեռքին է. այնտեղ «գործում են» կալւածատէր Աղիգեօզալբէգօվ և «հռչակաւոր» Ֆէօդորօվ։

Գանձակ, 18 յուլիսի

Այսօր լուր ստացւեց, որ Ասկերանի կռիւների ժամանակ թեից վիրաւորւել է Դաւիթ-բէգ Մելիք-Բէգլարեանը։

Գանձակի մօտ թուրքերը կամեցան խլել երկու կօզակից նրանց հրացանները։ Կօզակները, գալով քաղաք, առան հետները մի խումբ կօզակ և խուզարկութիւն կատարեցին թուրքերի վրաններում (Թօփալ-Հասանլուի մօտ) և գրաւեցին գտնւած զէնքերը։

Գանձակ

Գանձակի կայարանում ձերբակալւած են 550 հատ փամփուշտներ։

Վաղարշապատ, 17 յուլիսի

Ամսիս 14-ին Վաղարշապատում գաւառապետի կարգադրութեամբ գրաւեցին «Ալիքի» №№-ները հասոյ վաճառողի ձեռքից, կարծեմ այն պատճառով, որ Թիֆլիսում կառավարութիւնը խուզարկել է այդ թերթի խմբագրատունը. «ուրեմն թերթը неблагонадежная է»—ասում են գրաւողները ու պահում։ Ալօ

Գորիս, յուլիսի 19, 8 ժ. 10 ր. առ.

Թուրք քոչւորները յարձակւեցին Ջանգաթանի վրայ և բռնեցին պաւարի ու ոչխարի հօտերը։ Տեղի ունէր ուժեղ հրացանաձգութիւն։ Թուրքերի մէջ մեծ յուզմունք է տիրում։

Ներսէս վարդապետ

Երևան, 18 յուլիսի

Ամսիս 17-ին երեկոյեան ժամը 10-ին, անյայտ թուրքեր, զինւած մաուզեր և բրաունինգ ատրճանակներով, մտնում են Յովհ. Յովհաննեանի տունը։ Ծառան՝ քսան տարեկան մի երիտասարդ, լսում է շների կաղկանձն՝ հաչոցը և շտապում է դրան կողմը։

Ոչինչ չը նկատելով յետ է դառնում, երբ անմիջապէս բացւում է մի ատրճանակ, և գնդակն անցնում է ձախ ոտի ազդրից։ Երիտասարդը, հազիւ զգացած վէրքը առանձնապէս յետ է դառնում նայելու, երբ կրկին երկու անգամ կրակում են։

## Թ Ե Ր Թ Օ Ն

### ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ *)

II

Կալւածատիրական հողերի վերաբերմամբ եզրակացութեան գալուց յետ, գիւղացիների խորհուրդը դիմում է հողաբաժանման հարցին։ Սա ոչ պակաս կարևոր է ներկայ գտնւողների համար, քանի որ Լօռւայ գիւղերի կէսը ապրում է պետական հողերի վրայ, որ ոչ մի յարաբերութիւն չունին հողատէրերի հետ։

Ինչպէս և ամեն տեղ, չը նայած համայնական հողատիրութեան, հարուստները, մեծատունները «համփա» անելով Լօռում զաւթել են հողերի լաւ կտորները, վերցրել են մեծ մեծ բաժիններ և ոչ մի կերպով չեն համաձայնւում իրենց գրաւած հողի աւելորդ մասը զիջել դրացի հողազուրկներին ու սակաւահողներին։

Ինչպէս և ամեն տեղ հողազուրկների մի մասը—այն մասը, որ կախում ունի գիւղի աղայից քեթխուդաներից—պահում է հարուստների կողմը։ Երկրորդ դիրք են բռնում մանաւանդ «միջակ» ընտանիքները, որոնք հողաբաժանումից չունին ոչ մի շահ։

Չը նայած այս խոչընդոտներին, գիւղերից շատերը կատարել են արդէն հողաբաժանում և այսօր կենդանի օրինակ են հանդիսանում միւսների համար, ուր ունևորների կեղեքումը շարունակւում է անցած «իշխանիկ» տարիների նման...

Լսւում են թեր և դէմ կարծիքներ հողաբաժանման առաւելութիւնների—թերութիւնների մասին։

—Մեզ մօտ—ասում է Ա-ցին—առաջ հողաբաժանումը կատարւում էր հանձփաչարերի (կարողութեան աշխատաւորների ույժի) հիման վրայ։ Անասնատէր հարուստները գրաւել էին բոլոր լաւ արտերը, գրաւել էին աւելի մօտ, աւելի շահաւէտ տեղերը իսկ չունևորները ստիպւած էին բաւականանալ լեռնային անբերրի բաժիններով, կամ շատ հեռու ընկած կտորներով։ Զրկւածները հարկաւ, դժգոհ էին և սրանց դժգոհութիւնը օրէց օր աւելանում էր։ Կռիւները մեր գիւղից անպակաս էին։ Խառնակութիւններին վերջ տալու համար, վերջապէս որոշեցինք հետևել Ն-ի օրինակին և հողերը բաժանել «բողազի» (նաֆարի) վրայ։ Նոյնը պէտք է անել և այլ տեղերում, քանի որ հողը ապրուստ ստանալու համար է, իսկ հացի կարիքը չափւում է միայն շնչերի թւով...

Ընդունելով հողաբաժանման սկզբունքը մի ուրիշը առաջարկում է հող տալ նաև հողազուրկներին, այլ վայրերից եկւորներին (գեալմաներին). մի ուրիշը կողմնակից է որպէսզի տնտեսաները ևս ունենան հող—«Մերժելով դա, աւելացնում է նա, մենք զրկւում ենք կամաց իրենց իրաւունքից ունենալ հող հաւասարապէս աղաների հետ։

—Ունենալու են հող նաև քահանաները, առարկում է երրորդը, քանի որ նրանք էլ մարդիկ են, նրանք էլ ապրելու են աշխատանքով, իսկ հողագործութիւնը ամենաազնիւ աշխատանքն է»...

Ու—ցին լուսաբանում է որ հողերի հաւասար բաժանումը միայն չի հասցնի շօշափելի հետևանքների, քանի որ հողը ընդհանրապէս սահմանափակ է և տարէց տարի աւելի ևս սակաւում է։ Մտածելու է այնպիսի միջոցների մասին, որոնք կարող են նպաստել բերքի [illegible] հողերի խառնաշփոթութեան, երբ ամեն մի ընտանիք ունի տասնեակ կտորներ ցրւած հանդերի զանազան անկիւններում, առանց ընդհանուր համայնական արօտի։ Մենք հետևելու ենք մեր հարևան ռուսներին, բաժանելու ենք հողերը նախ մի քանի հանդերի, իսկ հանդերում էլ, հողը կտրտելու է [illegible] և ամեն մէկին հանելու է բաժին թէ լաւ հողից, թէ վատից։ Հանդավարը միջոց կը տայ ունենալ գիւղում մշտական արօտ, քանի որ երկու հանդը, օրինակ, կարելի կը լինի մշակել, իսկ 3-ը թողնել հանգստանալու և ծառայեցնելու իբրև արօտ։

Ի-ցին նոյնպէս չի բաւականանում հողաբաժանումով։ Մեր գիւղում, ասում է նա, ուր հողը պակաս է, բայց համարւում է անհատական սեփականութիւն, օրավարից ստացւում է մէկուկէս անգամ աւելի, քան թէ ստացւում է հարևան Ու.—ում, ուր հողը անցնում է մէկից միւսին։ Գիւղացու կարիքներին բաւարարութիւն տալու համար, իր տան մօտ նա ունենալու է այգի—բոստանատեղ, որը երբէք ենթակայ չը պէտք է լինի բաժանումի։ Ագրած կամ գիւղի մօտ գտնւած հողերը, որ այգելու ու մշակելու է աւելի լաւ կերպով, բաժանելու է երկար ընդմիջումներով (10—15 տարին մի անգամ),—այլ կերպ յետ կը մնայ տնտեսութիւնը։ Հողաբաժինների մէջ հաւասարութիւն պահպանելու համար կարելի է թողնել հեռաւոր սարի մասերը, որոնք կարող են բաժանւել ամեն 3 տարին մի անգամ...

Շ-ցին բողոքում է հողաբաժանումների դէմ։ «Աստւած մեզ հող չի տւել, ասում է նա. մեր բոլոր հողերը խոպաններ են. նրանք ստացել են անտառից, որը անգին տանջանքներով դառը քրտինքով մաքրել են մեր հայրերն ու պապերը։ Բացի այդ տեղ-տեղ անգին աշխատանք է թափւած, որպէսզի կամ հողը մշակւի, փափկի, խոտ դառնայ։ Հողը կենդանու նման մի բան է. լաւ բերք ստանալու համար նրան խնամելու է ու փայփայելու, նրան կերակրելու է, ինչպէս մայրը կերակրում է երեխային։ Եւ մեր տանջւած, խնամւած ու փարթամացրած հող-երեխային դուք ուզում էք այսօր խլել։ Դա անարդարութիւն է, դա կը խրախուսէ ծոյլերին, կը ծուլացնէ աշխատասէրներին»...

Հողաչափ Մ-ը լինում է, որ առանց մասնագէտ հողաչափերի ոչ մի հետևանքի չի կարելի հասնել։ Տեղացիք, և շրջակայքի «թանափչիք» չեն կարողանում չափել այն կտորները, որ ունեն անկանոն ձևեր։ Չափողները ենթարկւում են հարուստների ազդեցութեան և վերջիններիս ամեն մի բաժակ արաղը, ամեն մի աւած ճաշը աւելացնում է ունևորների օրավարների չափերը, օրաճաշը դարձնում է մի ողջ օրավար... «Թրահումը», հարուստներին թողնում աւելի մասեր—[illegible] մեր մէջ և առանց դրա վերացման հողաբաժանում չի կատարւի... Նախ քան հողաբաժանումի դիմելը, հարկաւոր է նախ մասնագէտի ձեռքով չափել ու պարզել բոլորի բաժինները»... Խօսակցութիւնները շատ երկարում են։ Գիւղացիների մեծ մասը կրկնում է ուրիշների ասածները։ Շատերը մնում են անտեղեակ մանրամասնութիւնների ու տեխնիկական դժւարութիւնների մէջ, որոնց տակից դիւրին չէ դուրս գալ։ Սակայն վերջ ի վերջոյ ձայների ճնշող մեծամասնութեամբ, հողաբաժանումների վերաբերմամբ ընդունւում են հետևեալ հիմնական կէտերը.

ա) Բոլոր վարելահողերը ենթարկել պարբերական բաժանումների բողազի (շնչի) վրայ։

բ) Այգիները, տանտեղերը, բանջարանոցները բաժանման ենթակայ չը դարձնել, հաշւի առնելով սակայն նրանց տարածութիւնը, վարելահողից բաժին հանելիս։

գ) Հաւասար չափով հող յատկացնել բոլոր գիւղում հաստատւած հողագործութեամբ պարապողներին, բնիկ թէ եկւոր, հողագործ թէ արհեստաւոր, առևտրական թէ կրօնաւոր, հետևել միայն, որպէսզի բոլորն ունենան հող հաւասար չափով։

դ) «Խոպանները», աղբած և այլ տեսակ հողերի նկատմամբ, որոնք կլանել են շատ աշխատանք, հետևել այն սկզբունքին, որպէսզի գնահատւի «թափւած քրտինքը»։ Այդ տեսակ հողերը յետ գնել տալ միայն որոշ վարձատրութեամբ կամ որոշ ժամանակամիջոց թողնելով առաջին անգամ մաքրողի ու մշակողի ձեռքում։

ե) Բաժանման դէպքում ձգտել մնալ հանդավար, ապահովելով բոլորին ընտանեկան այգեհամար կամ բանջարանոց։

զ) Պարտաւորեցնել կրթութիւն առած դպրոցականներին ազատ օրերը ծանօթացնել ցանկացողներին հողաչափութեան ձևերի հետ։

Հողաբաժանման հարցը վերջացնելուց յետոյ ժողովականների մէջ նկատւում է որոշ յոգնածութիւն։ Երկար մտածելու, խօսելու ու լսելու կարողութիւնից զուրկ գիւղացիք երկու օր համարեա անընդհատ ժողովելուց յետոյ բնականօրէն ձանձրանում են։ Նկատւում է դժգոհութիւն շատերի աչքերում. պակաս չեն և այնպիսիները, որոնք իրենց քունը յաղթելու համար ճաշերին ուժ են տալիս գինուն և ժողովին ներկայանում են մի քիչ ոգևորւած տրամադրութեամբ։ Շօշափւում են շատ կարևոր հարցեր, բայց բոլորն էլ քննւում են, բայց չեն լուծւում, կամ լուծւում են մակերևոյթօրէն։

Հայ-Թուրքական ընդհարումները և նրանց առաջն առնելու միջոցները, որ այնքան կարևոր է հայկական այլ վայրերում, Լօռւայ համար ունի երրորդական նշանակութիւն։

Լօռում թուրք [illegible] չը կան. Լօռում ընդհարումներ չեն եղել, լօռեցիք կատարել են միայն «զինւորական զբօսանքներ» դէպի հարևան Ղազախն ու Շուլաւէրը և այդ զօրախաղերը պսակւել են յաջողութեամբ առանց կռւի։

Բնականաբար, մեծամիտ և ինքնավստահ լօռեցիք այնքան էլ չեն մտածում զէնքի մասին...

Մէկի արած յայտարարութիւնը, որ գաւառական վարչութիւնից մահմեդականները վերցրել են 2000 իրաւունք հրացան կրելու, իսկ քրիստոնեաները միայն 700, որից հայերին չի ընկնում նոյնիսկ 200, չի թողնում ժողովականների վրայ խոր տպաւորութիւն։ Ամենայն դէպս, բոլորն էլ հրաւիրում են հաշտ լինել, լեռները բարձրացած թուրք քոչւորների հետ դժգոհութեան ոչ մի առիթ չը տալ, բայց միևնոյն ժամանակ պատրաստ լինել ինքնապաշտպանութեան համար։ Խմբագրւում և վաւերացւում է այն հեռագիրը Եղիազարօվի ընտրութեան մասին իբրև Բորչալւի ազնւականների պարագլուխ, որը հաղորդւած է արդէն թերթերում։

Լուսաւորութեան հարցը նոյնպէս, որ հրատապ է բոլոր գիւղերի համար, նոյնպէս անկարելի է քննել պատշաճ լրջութեամբ ու մանրամասնութեամբ։ «Պարտադիր ու ձրի ուսում», լաւ վարձատրութիւն ուսուցիչներին, դպրոցներ բոլոր գիւղերում, դասաւանդութիւն մայրենի լեզւով, մասնագիտական դասընթացներ և են ևն անվերջ «լաւ-լաւ», «առաջադէմ» առաջարկութիւններ։ Սակայն, ինչպէս, ո՞վ է իրագործելու այդ ամենը, ինչ միջոցներից հոգալու է անհրաժեշտ ծախքերը... մանաւանդ այն մանր գիւղերում, ուր ընտանիքների թիւը չի անցնում 20—30-ից։

Ընտրւում է մի յանձնաժողով, որին յանձնարարւում է այս բոլոր հարցերի մշակումը։ Ի միջի այլոց որոշւում է, որպէս զի Լօռւայ շրջանում մասաղներից գոյացող եկամուտները յատկացւեն հարևան գիւղերի պէտքերին և ոչ Ներսիսեան դպրոցին, որը առանց այն էլ ապահովւած է...

Մի քանիսը մեծ կարևորութիւն են տալիս գիւղերի մէջ եղած վէճերի լուծման, որ մեծ մասամբ հողային բնաւորութիւն ունեն։

Միւսները գտնում են, որ առանց ժողովրդական դատարանի, առանց սեփական դատականութեան անկարելի է կռւել գիւղերը քանդող գողերի ու աւազակների հետ, որ աշխատողներից կազմակերպւած են շատ աւելի լաւ կերպով։

Կարծիքներ են յայտնում որ հողաբաժանումները սերտ կերպով կապւած են հարկերի բաժանման հետ և առանց վերջիններիս բաւարար լուծման գիւղացի չքաւորները ենթակայ կը լինեն նոյն ճնշումների, ինչ որ է անցեալում...

[illegible] առաջարկւում է հիմնել գիւղատնտեսական ընկերութիւն հողագործութեան միջոցները բարելաւելու համար, ցոյց է տրւում վաշխառուների աւերիչ գործունէութեան վրայ։ Ակնարկւում է, թէ ինչ դրական հետևանքներ կարելի է սպասել հացահատիկների ամբարներ, գիւղական բանկեր հաստատելուց։ Պահանջւում են գիտակից վարող քարոզիչներ—շրջիկներ և այլն և այլն։

Սակայն... խօսելու ժամանակ չը կայ։ Պատգամաւորները շտապում են իրենց տները, հիւրընկալող գիւղացիք նոյնպէս նեղւած են երևում։

Բոլորն էլ յոգնած են...

Շօշափւած կարևոր հարցերը մնում են տակաւին։ Ժողովականները ցրւում են, խոստանալով իրենց տեղում արծարծել այն բոլորը, ինչ որ լսել էին ժողովում։

Սպասել մեծ հետևանքների ժողովից ի հարկէ անկարելի է։

Ակներև է սակայն մի բան, որ առանց սրա նման խորհուրդների, առանց ժողովրդի լայն խաւերի արթնացման ու գիտակցութեան բոլոր լաւ ծրագիրները, բոլոր բարի ցանկութիւնները կը մնան ապարդիւն... Բաւական չէ մտածել ու աշխատել աշխատաւոր ժողովրդի համար, հարկաւոր է նաև տանել գործը այնպէս, որպէսզի այդ լաւ ծրագիրները իրականանան ժողովրդի գիտակցութեամբ, իր աշխատաւոր մասսաների մասնակցութեամբ։

Իսկ այս տեսակ մասնակցութեան համար Լօռւայ ժողովի նման գումարումները կարևոր և նոյն իսկ անհրաժեշտ են։ Եթէ մենք չենք ուզում յետ մնալ ժամանակից, եթէ մենք ցանկանում ենք մեր ժողովուրդը պահել գիտակից օրւայ մեծ հարցերին, այս տեսակ խորհուրդներ գումարենք բոլոր հայկական վայրերում։ Շրջանական համախմբումները դարձնենք կանոնաւոր ու պարբերական, նրանց վերապահենք ամենամեծ իրաւասութիւնը և այդ խորհուրդներն ու նրանց ընտրած մարմինները համարենք մեր ապագայ ռամկավարական ինքնավարութեան հիմքաքարերը։

Զ.

*) Տես «Ալիք» № 60։

Ատրճանակի ձայնը լսելիս, դրացու բակում ապրող սպան դուրս է գալիս, իսկ համարձակ չարագործներն աներեւութանում են։ Երիտասարդը բոլորովին գունատ տարեց քաղաքային հիւանդանոցը. վէրքը վտանգաւոր չէ։

Սմբատ Մշ.

Սալեան.

Յուլիսի 14-ին, 3 ժ. մօտ Սալեանի գօչիները հաւաքւելով չորս խմբի բաժանւեցին. առաջին խմբի գլուխն անցաւ քաղաքի պատգամաւորի որդի Կահրաման հաջի Սէմդ-օղլին. երկրորդ խմբի գլխաւորը, Կահրամանի ընկեր Քէրբէլա-Բեշիր. երրորդ խմբի գլխաւորը՝ Մէշէդի Շահաբաս Կարագօղլի։

Սրանք որոշ տեղում միանգամից սկսեցին սաստիկ հրաձգութիւն. հրացանների ձայնը ականջ էր խլացնում.

Շուկայի մի մասը փակւեց. Նրանք, որ փակելու միջոց չունեցան, անձերը ազատելու համար խանութները բաց թողին ու փախան։

Կողմնակի մարդկանցից սպանւած են 4, վիրաւորւած 20։ (Հէյաթ)

Նոր-Բայազէտ. 17 յուլիսի

Ամսի 13-ին Ղարաբաղի էլի մարդիկ թւով 300 հոգի յարձակւում են Բասար-գեչար գիւղի հովիւների վրայ և տանում մօտ 600 ոչխար։ Այդ լուրն առնելուն պէս պրիստաւը օֆիցէրի և կօզակների հետ շտապում է դէպքի տեղը։ Թուրքերը, որ առաջուց իմանում են սրանց գալը, դիրքեր են բռնում և յանկարծակի կրակ բաց անում, որից սպանւում և վիրաւորւում են մի քանի կօզակներ։ Կենդանի մնացածներին ազատում է մի հնարքով նոյն գիւղի տանուտէր Արամ Մէլիք-Ղանչեանը, որը լաւ ծանօթ է լինում բոլոր դիրքերին ու ճանապարհներին. չը նայած, որ իր ձին կռւի ժամանակ սպանւած է լինում, կարողանում է սպանւած թուրքերի ձիերից մէկը ձեռք բերել և առաջնորդելով զօրքին յետ կանգնել. 14-ին հրաձգութիւնը նորից կրկնւում է թուրքերի և կօզակների մէջ, որի ժամանակ սպանւում է մի կօզակ և մէկը գերի ընկնում թուրքերի ձեռքը։ Սպանւած կօզակի դիակը մինչև այժմ թողւած է ընկած տեղը, որովհետև թուրքերը մօտեցողի վրայ կրակ են բաց անում։ Դէպքի տեղը գնացին տեղիս քննիչը և բժիշկը, իսկ կօզակների օֆիցէրը Երևանից պահանջել է օգնութիւն թնդանօթներով, որոնք արդէն ճանապարհ են ընկել։ Հետևանքի մասին կը գրեմ։

Այսօր թուրքերը գերի վերցրած Քեօլանիգրլան գիւղի Յովհաննէս Գրիգորեանին և Գրիգոր Տէր-Մկրտչեանին սոսկալի տանջանքներ տալուց յետոյ սպանել են։ Ա. Ս.

«Պետերբուրգի հեռագրական գործակալութեան» Թիֆլիսի թղթակիցը երէկ ուղարկել է իր գործակալութեանը հետեւեալ հեռագիրը։

«Փաշազարում պաշտօնեալ (Դերբենդի մօտ) Սամուրեան գնդի 7-րդ րօտային ապստամբել են. սպանել են իրենց հրամանատար գնդապետ Լեմկուլին, 2 սպայի և գնդի քահանային։ Պրօղնուդ ուղարկւած են զօրքեր։ Կօզակները գալուց յետոյ զինւորները անձնատուր են եղել, անձնելով իրենց պարագլուխներից 4-ին»։

## ԹԻՖԼԻՍ

◆ Վեհափառ կաթողիկոսը հեռագրով յայտնում է Թիֆլիսի թեմի սրբազան առաջնորդին՝ թէ կոնդակ է արձակելու, որով նշանակւում է Յովնանեան օրիորդաց դպրոցի համար ինը հոգաբարձական ընտրութիւններ։ Առաջնորդը սպասում է յիշեալ կոնդակին, որը ստանալուց անմիջապէս յետոյ Վանքի, Մողնու և Բեթղեհէմի ծխականները կը հրաւիրւին ժողովի՝ հոգաբարձական չորս-չորս պատգամաւորներ ընտրելու։ Ցանկալի է, որ այդ ընտրութիւնները տեղի ունենային պատուիրակների ընտրութիւնների հետ միաժամանակ, ճշտապէտն անհրաժեշտ է, ի նկատի ունենալով յիշեալ դպրոցի խառն վիճակը, տնտեսական և ուսուցչական ամբիոն հարցերը։

◆ Դէլլաղարից Թիֆլիս է վերադարձել Փոխարքայի օգնական Մալաման։

◆ Թիֆլիսի ծխախոտի գործարանատէրերն ու գործադուլաւոր բանւորները, վերջապէս, համաձայնութեան են եկել. գործադուլը տևեց 2 ամիս։

◆ Թիֆլիսի 6-րդ քաղաքամասի մանեղական հասարակութեան ներկայացուցիչները մի նամակով, ուղղած «Тифл. Л.», բողոքում են մի քանի թուրքերի կողմից ատրիկանութիւնից ներկայացրած ինչպէ գէմ, որով խնդրում են թոյլ տալ անատակականները նորից բանալ։

◆ Քաղաքային Ջրանցքի արհեստանոցի ծառայողները գործադուլ են յայտարարել, պահանջելով ռոճիկներն աւելացնել։

◆ Յուլիսի 18-ին «Ջերմէս» տպարանի գրաշարներն ու ծառայողները գործադուլ էին յայտարարել, ուստի և «Մշակը», որ տպագրւում է այդ տպարանում, երէկ լոյս չը տեսաւ։

◆ Կիրակի օր, յուլիսի 16-ին, Նորաշէնի ս. Աստւածածին եկեղեցու ծխական ժողովում պատուիրակ է ընտրւած Ա. Քալանթարը։

◆ Ստացանք՝ Կ. Այւազեանի «Ցողթական մայիսը» գրքոյկը. Թարգմ. Մ. Սարուխան. հրատ. «Կհանքի». եր. 8, գինն է 2 կոպ.

◆ Աբրահամ Յովսէփեանի գործակատար Գէորգ Վարդանեանը, մտնելով խմբագրատուն, յայտնեց, որ երէկ, ժամի 12-ին, 3 հոգի զինւած անյայտ անձնաւորութիւններ, յարձակւելով նրա վրայ Նորաշէնի փողոցում, երբ նա խանութից բանկ էր տանում 2380 ր., խլեցին ամբողջ գումարն ու անյայտացան։

◆ Ստացանք Կուշկայից Բ. Մարգիրոսեանի միջոցով այնտեղի հայ երիտասարդներից հանգանակւած 27 րուբլի, յօգուտ Մինքեադի ու Թաշէնի հայ աղէտեալների. Նւիրատուներն են՝ Լևոն Բաբախանեանց 2 րուբլի 40 կոպ., Մովսէս Ադալաեանց, Շամիր Գրիգորեանց, Միքայէլ Բալեանց, Բախշի Մարտիրոսեանց, Սեդրակ Զըլխարեանց, Թալէշ Յարութիւնեանց 2-ական ր., Արշակ Տէր Աստւածատրեանց 1 ր. 70 կ., Միքայէլ Բարսեղեանց 1 ր. 50 կ., Արմենակ Ղարաղաշեանց 1 ր. 50 կ., Աթանէս Տէր Վարդանեանց, մի Ռէս, Աղալար Ախտիսեանց, Լևոն Պետրոսեանց, Խաչատուր Պետրոսեանց, Կարապետ Բաղդասարեանց, Ստեփան Խանծատեանց մէկական ր., Նիկոլայ Աթայեանց 50 կ., Օսէփ Փիլվէրդեանց 40 կոպէկ։

◆ Ներկարար և ցեմենտչիների մի դաշն. խմբից Ա. Մելիքեանի միջոցով ստացանք 5 ր. յօգուտ ծխախոտագործարանների գործադուլաւոր բանւորների։

◆ Աղաբէկ Բիձիեանի և Դիմիտրի Ղարայեւի միջոցով ստացանք Ադելխանովի Ս. Դ. և Հ. Ց. Դ. բանւորներից 46 ր. 30 կ. ծխախոտագործարանների գործադուլ արած բանւորների համար։

## ԿՈՎԿԱՍ

◆ Երևան։ Երևանի ս. Յովհաննէս եկեղեցու ծխական դպրոցի դահլիճում ամսիս 16-ին կայացաւ ս. Էջմիածնում օգոստոսի 15-ին կայանալիք ժողովի պատուիրակների ընտրութիւնը։ Մօտ 1700 21 տարին լրացած ծխականներից եկել էին միայն 106 հոգի. կանայք եւ, օգտւելով Վեհափառ Կաթողիկոսի տւած ընտրողական իրաւունքից, եկել էին, և ուրախալի էր տեսնել օրիորդներ և գլուխները շինած ու բերանները փակած կանայք այսպիսի մի հասարակական ժողովում։

Նախագահը բացատրելով ժողովի նպատակը և շնորհաւորելով ներկայ գտնւող կանանց քաղաքացիական առաջին քայլը, անցաւ հերթական հարցին։

Ընտրութեան համար առաջարկւեցին մի շարք թեկնածուներ, և գաղտնի քւէարկութեամբ ընտրւեցին պ. պ. Մ. Մոսինեան 101 ձայնով և Ն. Ցակոբեան 65 ձայնով։

Ընտրութիւնից յետոյ համաձայն առաջնորդի պաշտօնական թղթի, մի որբ ընտանիքի (չորս երեխաներ) համար հանգանակւեց 11 ր. 45 կոպէկ։

◆ Քարվանսարա, 11 յուլիսի։ Սև-քար գիւղից դէպի արևմուտք, մօտ 15 վերստի վրայ գտնւում է ս. Գրիգոր ուխտատեղին, ուր տարւայ մէջ երեք անգամ շրջակայ գիւղերից գալիս են բազմաթիւ ուխտաւորներ։ Նոյն իսկ թուրքեր բաւական թւով խաղաղ տարիներում՝ գալիս են եղել, բայց այս տարի շնորհիւ թուրք-հայկական ընդհարումների, նրանց թիւը հազիւ տասի հասնէր։

Ամսիս 7 ից արդէն ուխտաւորները կամաց-կամաց հաւաքւում էին։ Կիրակի օրն արդէն շատ էին, մօտ 1000 հոգի։ Ինչպէս առաջ եկել էին և մի քանի հոգի թուրքեր. պէտք էր տեսնել, թէ որքան ուրախութեամբ հայերը հիւրասիրում էին նրանց. ամէն մէկն աշխատում էր, որ իրեն մօտ գան ճաշելու։

Այդ թուրքերը միաբերան պնդում էին, որ իրենց տանը բժշկոյր, իրենց դէպի անմիտ և եղբայրասպան կռիւ մղողը եղել են իրենց արիւնը ծծող աղալարներն ու բէկերը։

Վահան

◆ Ախալքալաք, 10 յուլիսի։ Երէկ, ճաշից յետոյ 6 ժամին, քաղաքի մրգավաճառների շուկայում մանրուոր վէճի առթիւ հրացանաձգութիւն սկսւեց թուրքերի և պահակային զինւորների մէջ. սպանւած է մի թուրք, ծանր վիրաւորւած են մի թուրք և մի զինւոր։ Բազարը խուճապի մէջ ընկաւ, սակայն շուտով ամէն ինչ պարզւեց ու քաղաքը հանգստացաւ։

— Ամսիս 7-ին նշանակւած էր պատուիրակների ընտրութիւնը։

Ընտրութեան ներկայ էր ժողովականների խուռն բազմութիւն։

Ընտրւեցին Աղբալեանց Շմ. քահանան, Վարձիւեան Նիկոլայը և Խուրշուտ Մնացականեանը։

Ընտրութեանը՝ հակառակ կոնդակի պահանջի և երիտասարդութեան ցանկութեան՝ ոչ մի կին չէր հրաւիրւած...

◆ Բագու։ «Հէյաթը» հաղորդում է մի շատ հետաքրքիր լուր։ Ոստիկանապետ պօրուչիկ Իւզբաշ խնդրել է Բագւի ընդհ. նահանգապետից, կարգադրել որպէսզի Շուշի դէպքերի մասին լրագիրները ոչ-պաշտօնական հեռագիրներն ու յօդւածները չը տպեն։ Ոստիկանապետի ասելով, դրանք, ինչ տեսակ ստոյգ աղբիւրներից էլ որ գրւեն, դարձեալ չեն կարող հաւասարել գործակալութեան հեռագիրներին (sic!)։ Լրագիրները թող բաւականանան այս վերջիններով ու պաշտօնական հեռագիրներով։

— Տեղիս խաղաղարար յանձնաժողովը հեռագրով հարցապնդում է արել Շուշի քաղաքային վարչութեան նախագահին և այնտեղի խաղաղարար յանձնաժողովին, թէ Շուշիում տեղի ունեցած ցաւալի դէպքերը ինչպէս և ինչ պատճառներից են ծագել։

—Անցեալ շաբաթւայ ընթացքում Բագւի ոստիկանապետի հրամանով իրենց պարտաւորութիւններն ըստ արժանւոյն չը կատարելու համար ծառայութիւնից արձակւած են 18 քաղաքապահներ, իսկ 14 հոգի յանդիմանութիւն են ստացել։ (Հէյաթ)

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Пр. Вѣстн.»-ը առանձին յօդւած է նւիրել Դումայի փակման ու Վիբորգում կայացած Դումայի անդամների խորհրդակցութեան։ Իշխող բիւրոկրատիայի պաշտօնական օրգանն այդ յօդւածում, ի միջի այլոց, ասած է. «Ռուս ժողովրդի մեծամասնութեան կողմից ոչ մի համակրանք չէր կարող գտնել Վիբորգի խորհրդակցութիւնը, հետեւաբար և նա ամենայն անտարբերութեամբ (sic!) վերաբերւեց այդ «ապօրէնի» (!) խորհրդակցութեանը։ Սակայն, նախ քան ցրւելը, Պետական Դումայի անդամները մի կոչ կազմեցին ուղղած ռուս ժողովրդին, որտեղ հրաւէր են կարդում չը տալ ոչ մի կոպէկ արքունի գանձարանին և ոչ մի զինւոր զօրքի համար։ Սակայն ժողովրդի մասսան գիտէ, թէ ինչ հետեւանքներ են բերում այդ տեսակի կոչերը»...

◆ Յուլիսի 12-ին կայացել է մինիստրների խորհրդի մասնաւոր նիստը, որտեղ քննութեան է առնւած թէ ներկայ քաղաքական մոմէնտի նշանակութիւնը և թէ մինիստրութեան քաղաքականութեան ծրագիրը։ Այդ նիստում Ստոլիպինը արտասանել է մի երկար ճառ. ի միջի այլոց պրեմիերը ասել է. «Աջ ձեռքով հարկաւոր է ազատութիւնը հաստատել, իսկ ձախ ձեռքով անխնայ մաքառել յեղափոխութեան դէմ»։ Խորհուրդը սկզբունքով համաձայնել է մշակել ընդհանուր ձայնատւութեան հիմունքները, և անմիջապէս գիւղացիների անհող պարտական հարցում։ Որոշւած են նաև մի շարք միջոցներ բարելաւելու զինւորների դրութիւնը, ու վերացնելու հրէաների իրաւունքների սահմանափակումները։ Ընդունելով, որ մամուլը յեղափոխութեան գլխաւոր գործօններից մէկն է, որոշւած է անխնայ կռիւ մղել մամուլի դէմ։ «Р. С.»

◆ Յուլիսի 11-ին ներքին գործերի մինիստրը առանձին շրջաբերականով հրամայել է նահանգական վարչութիւններին, 1) աքսորել նահանգի սահմաններից անվստահելի անձանց, 2) ձերբակալել յեղափոխական կուսակցութիւնների գործունէութեան մասնակից մարդկանց և 3) աքսորել կայսրութեան հեռաւոր տեղեր նրանց, որոնց մօտ կը գտնւեն պատրաստւած ապստամբութեան, դաւադրութեան վերաբերեալ թղթեր։ «Р. С.»

◆ Մամուլի վերաբերեալ գործերի Օդեսայի տեսուչ Դրաշոֆը կանչում է իր մօտ յուլիսի 7-ին «Ю. Об.» լրագրի խմբագրին և յայտնում որ լրագրի հրատարակութիւնը պէտք է դադարեցւի։ Ապա դիմելով խմբագրին ասում է. «Եթէ դուք յայտնէք ինձ ձեր աշխատակցի իսկական անունը, որ գրում է Boронов կեղծ անւան տակ, դուք կը փրկէք ձեր լրագիրը»։ Խմբագրական խորհուրդը մերժում է Boронов-ի իսկական անունը յայտնել. դրանից յետոյ գեն. նահանգապետի կարգադրութեամբ անմիջապէս դադարեցւում է «Ю. Об.» հրատարակութիւնը։ «XX В.»

◆ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի կոմիտէտը հարց է բարձրացրել հրաւիրել կուսակցութեան 4-րդ համառուսական համագումարը։ «XX В.»

◆ Արհեստակցական միութիւնների պատգամաւորական ժողովը եկել է լայն եզրակացութեան, որ ներկայ քաղաքական մոմէնտին անհրաժեշտ է ընդհանուր գործադուլ յայտարարելը։ Նոյն եզրակացութեան է եկել և կուսակցական կազմակերպութիւնների ներկայացուցիչների ժողովը։

◆ Կուրսկի ժանդարմական վարչութիւնը ստացել է Պետերբուրգի ոստիկանութեան դեպարտամենտից շրջաբերական հեռագիր, որով հրամայւում է գաղտնի հսկողութիւն նշանակել Պետական Դումայի վերադարձող անդամների վրայ։ «XX В.»

◆ Սպիրիդոնովան յուլիսի 9-ին հասել է Իրկուտսկ. այնտեղից ճանապարհւում է Ներչինսկ, և այժմ արդէն հասած կը լինի Ներչինսկ։ Ներչինսկը—տաժանակիր աշխատանքի միակ տեղն է, ուր աքսորւում են կանայք. այստեղ կանայք զբաղւում են այսպէս կոչւած ներքին աշխատանքներով, այսինքն կարով, ձեռագործութեամբ և այլն։ «Б. В.»

◆ Պետերբուրգում բանւորների կանայք շուկայում սարքել են կանանց միտինգ։ Կանայք պահանջ են դրել կիրակի օրերը փակ պահել բոլոր կրպակներն ու գինետները։ Մի կին, որ շատ տաք ու ոգևորւած խօսում էր, վերջացրեց իր ճառը հետեւեալ խօսքերով. «Ընտանիքները երեխաների հետ միասին սովից մեռնում են, իսկ տրակտիրշչիկները հարստանում են մեր ամուսիններին ու թալանում նրանց վերջին կոպէկները»։ Որոշւած է ամէն միջոց գործ դնել փակել տալու կիրակի օրերը գինետները։ «Народъ»

◆ Սիզրանի հրդեհի պատճառած ընդհանուր վնասների գումարը հասնում է 10 միլիոն ռուբ.։ «XX В.»

◆ Գոմէլի բանտից փախել են 28 հոգի քաղաքական բանտարկեալներ։ 5 հոգի նորից ձերբակալւած են, իսկ 2-ը սպանւած են։ «Р. С.»

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ կարգադրւած է աքսորել Պետերբուրգի նահանգի սահմաններից դուրս Ա. Նովիկովին (Բագւի նախկին քաղաքագլուխ)։

◆ Յուլիսի 13-ին Պուտիլովի գործարանի բանւորներին ենթարկել են խուզարկութեան. գտել են մեծ քանակութեամբ անլեգալ գրականութիւն, զէնք և կարևոր թղթեր։ («Р. С.»)

◆ Պետերբուրգում Վասիլևսկի քաղաքամասի ոստիկանատան բանտում «բրաունինգի» ատրճանակի մի հարւածով վերջ է դրել իր կեանքին կանանց բժշկական կուրսերի ուսանողուհի օր. Մ., որ ընդամենը մի շաբաթ էր միայն բանտարկւած։ Հանգուցեալը մի դեռատի գեղեցիկ օրիորդ էր, գաւառից նոր եկած։ «Р. С.»

◆ Վարշաւայից 30 վերստ հեռաւորութեան վրայ 40 հոգի անյայտ անձնաւորութիւններ կանգնեցրել են երկաթուղու գնացքը ու, կողոպտելով 15,000 ռուբլի, անհետացել։ «Р. С.»

## ՄԱՄՈՒԼ

Գ. Կուզմին-Կարաւաեւ «XX Вѣкъ» թերթում մի յօդւած է զետեղել Դումայի ցրւելու առթիւ.

Վերջացաւ այն,—ասում է նա,—ինչով երկու տարւայ ընթացքում ապրում էր Ռուսաստանը...

Հարիւր երեսուն միլլիոն ժողովուրդը չէ կարող գոյութիւն ունենալ առանց հեղինակութեան. ոչ թէ հրացանների, սւինների, մտրակի և կախաղանի հեղինակութեան, այլ ներքին հեղինակութեան, որը հանգչում է դպրոցի գիտակցութեան և հաւատի վրայ։

Այդպիսի հեղինակութիւն էր, դեռ ժողովւելուց շատ առաջ, Պետական Դուման. կառավարական իշխանութեան բարոյական հեղինակութիւնը գլխիվայր ընկնում էր տարիների ընթացքում...

Ժողովրդեան ներկայացուցչութեան գաղափարը հանդիսացաւ որպէս փրկութեան խարիսխ...

Վերջապէս այդ գաղափարը մարմնացաւ...

Բայց անցաւ 72 օր, և Դումա այլևս չը կայ։ Յայտարարւած է հին սկզբունքը. «Հարկաւոր է նախ և առաջ խաղաղութիւն», և երբ այդ խաղաղութիւնը կը հաստատւի, այն ժամանակ նորից կը կոչւեն ժողովրդեան ներկայացուցիչները։

Այդպէս են դրամաբանում իշխանաւորները, և այդ այլանդակ, բարբարոսական դրամաբանութեան առթիւ պ. Կարաւաեւը միանգամայն արդարացի նկատում է.

Ախր ինչպէ՞ս կարող է խաղաղութիւն ընկնել, քանի որ այն, ինչ որ յուզմունք էր առաջացրել և օրէցօր սաստկացնում է այդ յուզմունքը, մնում է անփոփոխ։

Եւ միթէ եկող փետրւարի 20-ին չի կրկնւելու այն, ինչ եղել է ապրիլի 27-ից մինչև յուլիս 8-ը... Միթէ երկրորդ Դուման էլ առաջինի դրութեան մէջ չի լինելու... Միթէ նա ինքը սահմանւած չի լինելու դիմելու ժողովրդին հանգստութիւն քարոզող խօսքերով, չի կատարել քննութիւններ, չի պահանջելու պատասխանատու մինիստրութիւն...

Այո, բայց Դուման ցրւողները համոզւած էին, որ յուսահատութեան գագաթնակէտին հասած, բայց անպատրաստ ժողովուրդը, իրենց այդ քայլի շնորհիւ, կանի մի վճռական քայլ արիւնոտ մղձաւանջից ազատւելու համար, և իրենք, ժողովրդի այդ «աքերը» նոյնպէս վճռական մի հարւածով կը ջախջախեն և երկար ժամանակով կը չէզոքացնեն ժողովրդի ըմբոստութիւնը։ Միւս կողմից, նրանք, անկասկած, յոյս ունեն, որ այդ 7 ամսւայ ընթացքում այնպիսի դրութիւն կը ստեղծեն, որ ժողովուրդը կը մոռանայ, թէ երբ և ինչէ նա ունեցել է Դումա և ընտրողական իրաւունք, և իրենք իշխանաւորները ընտրել կը տան իրենց ցանկացած «ժողովրդեան ներկայացուցիչներին» և կը կազմեն մի... «ոչխարների պարլամենտ»։

Ձեռն սխալւում, սակայն...

* *

Մինիստրների խորհրդի նոր նախագահը մի շրջաբերական է հրատարակել, որում զանազան խորհուրդներ է տալիս իր ստորադրեալներին. Նախ՝ «կարգը վերականգնելու համար անհրաժեշտ է ամենավճռողական ղեկավարութիւն, առանց վարանումների»։ յետոյ, ամէն մի ձեռնարկած միջոց պէտք լինի «խիստ մտածւած»։ և որովհետև «կռիւը մղւում է ոչ թէ հասարակութեան դէմ, այլ հասարակութեան թշնամիների», ուստի թոյլատրելի չեն «մեծ ծաւալով ճնշումներ» և ձեռք առնւած միջոցները պէտք լինեն «օրինաչափ»։

Ի՞նչ է այդ,—բացականչում է «Руск. Вѣд.»,—մի թզենու տերև է, որով ծածկւում է կառավարական կամայականութեան մերկութիւնը, թէ՞, ընդհակառակը, դա մի սպառնալիք է այն սանձարձակութեանը, որով մինչև այժմ վերականգնում էին «կարգը» կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչները իրենց ոչ-պաշտօնական ոգևորողների աջակցութեամբ... Այդ կասկածը եթէ ունէին էլ ստորադրեալ իշխանութիւնները, ցրւեց 24 ժամից յետոյ Պետերբուրգից ստացւած տեղեկութեան շնորհիւ։

Եւ պարզւեց, որ պ. Ստոլիպինի առաջարկած նոր «մեթոդով» ծածկւել են բազմաթիւ թերթեր, կուսակցական ակումբները, արհեստակցական միութիւնները և այլն, և այլն։ Դրանք են, ուրեմն, «հասարակութեան թշնամիները» և այդ կործանիչ—բայց այս միջոցներն են, որ շրջաբերականն անւանում է «օրինաչափ»։

Եւ ունենալով իրենց աչքի առաջ այդպիսի օրինակ,—ասում է թերթը,—տեղական իշխանութիւնները կարող են հասկանալ վերանորոգեալ մինիստրութեան իսկական «ծրագիրը»։

Մենք էլ ենք արդէն սկսել զգալ այդ «ծրագրի» ազդեցութիւնը և, անկասկած, էլի կը զգանք...

## ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

### ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՔՐՈՆԻԿ

—

Ալէքսանդրոպոլից մեզ գրում են։ Ամսիս 5-ին քաղաքային բանկի ծառայողները, բացի վարչութեան նախագահից և երկու օգնականներից ու հաշւապահից, յայտարարեցին գործադուլ՝ դնելով իրենց տնտեսական պահանջները։

Բանկի վարչութիւնը, իր գլուխ ունենալով քաղաքագլուխ պ. Ց. Տիգրանեանցին, առանց քննելու պահանջները, հեռացրեց գործադուլ անող ծառայողներին. ի միջի այլոց պ. քաղաքագլուխը դէմն շպրտելով ներկայացրած պահանջների թուղթը ասել է «այս ինչ լրբութիւն է»։ Նոյնպէս է վարւել նաև փոխադարձ վարկի ընկերութեան գործադուլ արած ծառայողների կողմից ներկայացրած պատգամաւորի հետ, ասելով, «ես չեմ կարող տանել այդպիսի կոպիտ վարմունք (որն է՝ գործադուլը)։ Եթէ հնարաւորութիւն լինի, կը հեռացնէի քաղաքից այդ պարոններին»։

—

Հ. Ց. Դաշնակցութեան Թիֆլիսի կօշկակարների արհեստակցական միութիւնը քննել է գործատէրեր Սերգէյ Խիզանեանի և Լևոն Դանիէլեանի կօշկակար—բանւորների դրութիւնը, և համաձայն վերջիններիս վճռի առաջարկել է հետևեալ պահանջները.

1. Գործատէրերը պարտաւոր են բանալ մի արհեստանոց, ուր բոլոր բանւորները միասին աշխատեն. մինչև այժմ տէրերը աշխատանք են տալիս բանւորներին՝ տանը պատրաստելու.
2. Ռոճիկներն աւելացնել 30%-ով.
3. Նոր աշխատաւոր ընդունել և արձակել բանւորների համաձայնութեամբ.
4. Բանւորներին, հիւանդացած դէպքում, տալ մէկ ամսւայ վճար.
5. Գնած զանազան գործիքները կը լինեն տէրերի հաշւին.
6. Ձրի բժշկական օգնութիւն.
7. Քաղաքավարի վերաբերմունք դէպի բանւորները.
8. Գործադուլի ժամանակւայ վարձը վճարել։

Առաջարկելով այս պահանջները՝ բանւորները յայտարարել են գործադուլ։

## ԹՈՒՐՔԱՀԱՅ ԿԵԱՆՔ

### ԹԱԼԱՆԻ ԵՒ ԲՌՆՈՒԹԵԱՆ ՌԵԺԻՄԸ

IV

Թէև այս ամբողջ կասկածների շրջանում չեղան աղմկարար լուրջ, մասսային կոտորածներ, բայց մասնակի բռնութիւններ ու հարստահարութիւններ անպակաս են. իբրև օրինակ կարելի է յիշել այն անլուր գազանութիւնները, որ կառավարութիւն գործածեց բանտում մի քանի քաղաքական յանցաւորների վրայ, մանաւանդ Վարդգէսի, որի ձեռներն ու ոտները շղթայեցին, շաբաթներով փուլիս ձգեցին, մտրակեցին թանտարել նոյն իսկ, որի պատճառով և նա երկիւղից ամբողջ օրերով քաղցած էր մնում։

Այնուհետ քօռ Հիւսէն քաշէն իր ալայով կանգնել էր արաբական ապստամբութիւնը զսպելու, երկար ժամանակ տեղեկութիւն չը կար նրանից, լուր տարածւեցաւ մինչև իսկ թէ անյայտացել է. ժողովուրդը թէև ուրախացաւ, բայց նրա հեռանալովը էլ բռնութիւնները վերջ չը գտան. իր տղան հէնց հօր բացակայութեան առեն տարաւ Արճրա գիւղացի Պետօի 10 եզը։ Ինքը քօռ Հիւսէն էլ անցեալ օրը վերադարձաւ Հաջից աւելի մեծ պատիւներով, որպէսզի այսուհետև իր աւազակութիւնները շարունակի էլ աւելի սանձարձակօրէն և ինչ՝ դեռ հազիւ ոտք դրած տան շէմքը արդէն սկսեց. առաջին առթիւ լսում է, որ երկու հայեր դաշտում վար անելիս հողէ ամանով մը ոսկի գանձ են գտել, էլ հարցնել ստուգել չը կայ, կանչել է տալիս երկու հային, որոնց հետ հին հաշիւներ է ունեցել, ձեռք ու ոտք հրամայում է կապել, լաւ քաշել փայտով, ձգել ախոռ, այսպէս պարբերաբար շարունակւում է. մինչև երեկ նոր ոսկու գանձ գտնեն և տան փաշային, որ սա իր ճանապարհորդական ծախսերը, կամ իրենից մեծերին տւած կաշառքների տեղը հանէ։

Հայոց ձորի կողմերը անցեալներ պատահեցաւ հերոսական մի դէպք. ոստիկանները բռնում են ճանապարհորդ երիտասարդ մի գիւղացու և իբրև յեղափոխական ձերբակալում։ Ապա յանձնւում է մի սուվարու, որ տանէ Ոստան կառավարութեան յանձնէ. ճանապարհին հրացանի կոթով խեղճ տղային մեռնելու աստիճան ծեծում է և երբ գետի ափն են հասնում ու սուվարին առաջ է անցնում ջրի մէջ, հայ երիտասարդը հաւաքում է իր վերջին ուժերը, վերցնում է գետնից մի քար և ուղիղ զարթիայի ծոծրակին խփելով իր գայլոյթի թոյնը թափում. դաժիժիան վար է գլորւում ձիուց. մեր հերոսը անմիջապէս վերցնում է գետափին արեան մէջ տապալւողի հրացանն ու փամփուշտները կապում վրան, հեծնում ձին ու հեռանում։ Մօտակայ հովիւները տեսնում են այդ բանը, հաւար ձգում, հերոսը բռնւում է և այժմս տեղւոյս բանտն է։

Քաղաքիս մէջ պատահածներից յիշենք միայն այն, որ անցեալներ երկու աղքատ կանայք գնացել էին դաշտ կանաչ հանելու իրենց անօթութիւնը գոնէ դրանով կշտացնելու։ Ուրբաթ առաւօտ մօտերը նրանց դէմն են դուրս գալիս մի քանի զօրքեր. կանայք փախչում են, զօրքերը հետապնդում, մէկը կարողանում է փախչել ու ազատւել, իսկ միւսը բռնաբարւում տեղն ու տեղը։

Գօլայ Ռուվան փաշայի սպանութեան առթիւ թուրքերի և ամբաստանեալ քիւրդերի դէմ հանւած հալածանքները վատ չեն այդ տեսակէտից, որ մեծ թւով աքսորականներ ուղարկւում են հեռու գաւառները, ուր դրանք, շատերը մեծամեծների որդիներ, չը կարողանալով տանել եղած նեղութիւններն ու բռնութիւնները, սկսում են տեղական ժողովրդի մէջ համարձակ խօսել կառավարութեան հասցէին, որով քիչ ու շատ առիթ տալիս մտքերի փոփոխութեան. բայց տակաւ դեռ դժգոհութեան գործնական ցոյցի ոչ մի քայլ, ինչպէս Փոքր Ասիոյ զանազան քաղաքներում, տեղիս թուրք հասարակութիւնը անշարժ ու քարացած դրութեան մէջ է, պատճառը, որ նախ համեմատաբար սակաւութիւն է թուրք գիտակից հասարակութիւնը և երկրորդ ու ամենագլխաւորը ծայր աստիճան մոլեռանդ ու տգէտ է. պաշտօնէութիւնը ամբաստանեալ դասակարգներ են, որոնց համար ի հարկէ ներող ռեժիմը շահաւէտ է քանի որ իրենց չաղ չաղ ամսականները ամիսը դեռ չը լրացած ամէն տեսակի բռնութիւններով լրիւ գանձում են, իսկ բուն տեղացի հասարակութիւնը աղքատ է և մեծ մասամբ իշխաններից կազմւած։ Դժգոհ աքսորականների կողմից, որոնք շրջապատւած են լրտեսներով, թեթև ցոյցի մը տպաւորութիւն թողեց վերջերս դուրս եկած թուրքերէն լեզւով յայտարարութիւնը «Վաթանփէրվէր» (հայրենասէր) ստորագրութեամբ։ Այդ թռուցիկով ծաղրում են կառավարութեան ընթացքը հարստահարութիւնների և տուրքերի առթիւ ու հրաւիրում ժողովրդեան գիտակցել իր շա-

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետերբուրգի գործակալութիւնից)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յուլիսի

...կան Դումայի գոյութեան 53 օրւայ համար Դումայի անդամներին տրւած ապրուստի գումարը, ըստ նախնական հաշւի, հասնում է 400,000 րուբլու։

## ՊՕՍՏԱՐԿՂ

Ստացանք Նոր-Բայազէտի քաղաքագլուխ Գ. Արծրունուց պաշտօնական բլանկի վրայ ռուսերէն գրւած մի դիմում, որին հարկաւոր ենք համարում պատասխանել հէնց նոյն ձևով. Господину Ново-Баязетскому городскому старостѣ Арцруни.

Симъ увѣдомляемъ Васъ, что отношеніе Ваше отъ 17-го іюля сего года за № 506 нами получено. По вопросу о предложеніи Вашемъ—объ «увѣдомленіи о личности составителя статьи», помѣщенной въ № 61 газеты нашей, на предметъ возбужденія противъ онаго составителя уголовнаго преслѣдованія, въ установленномъ закономъ порядкѣ, за ложный наносящей личности Вашей и одной помощника Вашего обиду «доносъ», и угрозы Вашей, буде мы не откроемъ Вамъ личности вышепоименованнаго составителя, считать отвѣтственной редакцію нашу,—долгомъ считаемъ «оффиціально», какъ того Вы требуете, заявить, что оная, т. е. личность, будетъ открыта нами, буде въ семъ явится необходимость на с дѣ

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երեւանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7 պօդիեզդ Նօտար Միքրովի։

Նոյնպէս պատրաստում է ծաղիկը։
(չ. ո. կ.) 29—96

Թարգմանւում է
ԲԱԲՍ և ԿՎԻԼՉ

Սօցիալիստական կատեխիզիս

ԵՒ

ԼԱԶԱՐԵՎ.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿԱՏԷԽԻԶԻՍ

395 3—1

Լոյս տեսաւ

ԳՐԱԴԱՐԱՆ „ՅԱՌԱՋ“-Ի

№ 5 Չերնօվ. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԲԱՆՒՈՐ 15 կ.

№ 6 Պերներստօրֆեր.-ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱՆ. 5 կ.

№ 7 Պրամպօլինի. ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ 5 կ.

389 3—2

„Կենտրոնական“

գրավաճառանոցում վաճառւում են

Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԳՐՔԵՐԸ

հետեւեալ (պակասեցրած) գներով.

Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի մի գրքում ամփոփած, նախկին 10 ր. փոխանակ . 8 ր. —

Առանձին ձայները.

Արական բարձր ձայն նախկին 3 ր. փոխանակ վաճառւում է 2 ր. —

Արական խոնարհ ձ. նախ. 3. ր. փ. վ. 2 ր. —

Իգական բարձր » » 2 » » » 1 — 50

Իգական խոնարհ » » 2 » » » 1 — 50

Բոլորը միասին գնողները 10% զեղջ են ստանում. օտար քաղաքներից պահանջողները վճարում են և ճանապ. ծախք։

48 10—3

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ Կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրւում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին կիրակի առաւօտեան ժամը 10-ին մէկ պատուիրակ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Ս. Սարգիս եկեղեցու՝ Կոստանդին քահանայ Արարատեանց։ 393 3—1

ՀՐԱՒԷՐ

Հոգևոր բարձր-իշխանութեան հրամանով, ԷՋՄԻԱԾՆԵՑՒՈՅ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՒ 21 տարեկանից բարձր տարիք ունեցող կին և մարդ ծխականները, կիրակի ամսիս 23-ին, առաւօտեան 10 ժամին հրաւիրւում են նոյն եկեղեցին երկրորդ եւ վերջին ժողովի՝ ընտրելու երեք պատուիրակ, որոնք պէտք է ընտրեն ռուսահայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովի համար Թիֆլիս քաղաքի կողմից չորս պատգամաւոր։

Ներսէս աւ. քահ. Աբովեանց

392 2—1

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ Կոնդակների և Թեմիս բարձր սրբազան Առաջնորդի առաջադրութեան համաձայն ՋՈՒՂՈՒՐԷԹԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՒՈՒ 21 և աւելի տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները հրաւիրւում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին կիրակի ժամը 10-ին ա) ընտրելու մի պատուիրակ ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու. բ) ընտրելու նոյն եկեղեցու համար նոր երեցփոխան։

Ծխատէր՝ Յովհաննէս քահ. Իգրաշեան։

390. 3—1

ՀՐԱՒԷՐ

Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ Կոնդակների համաձայն Թեմիս ս. Առաջնորդի կարգադրութեամբ, ԹԻՖԼԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ (ՄԱՅՐԱՆԻ Ս. ԳԷՈՐԳ) ԵԿԵՂԵՑՒՈՒ 21 տարին լրացրած՝ արական և իգական բոլոր ծխականները պէտք ընտրեն երեք պատուիրակ՝ ռուսահայ եկեղեցական կենտրոնական ժողովի պատգամաւորների ընտրութեան համար. ուստի յարգելի ծխականները հրաւիրւում են շնորհ բերել յուլիսի 23-ին, կիրակի օրը, առաւօտեան 10½ ժամին նոյն եկեղեցին երկրորդ անգամ ընտրութեանը մասնակցելու։

Ժողովը կանոնաւոր կը համարւի որքան ընտրողներ ևս ներկայ լինեն։

Կաթուղիկէ եկեղեցու միաբան՝ Ստեփաննոս աւագ քահ. Սամուէլեանց։

391 3—1

Նոր լոյս են տեսել և վաճառւում են

„Գուտտենբերգ“

գրավաճառանոցում

Վագօվ Ի. Լծի տակ, պատմ. վէպ II մաս 70 կ.

Բակուրցեվ Ա. Տ. Ինչպէս պէտք է ընտրել ժողովրդական ներկայացուցիչներ, Թարգմ. Ա. Տէր-Առաքելեանց—2 կ.

Ատրպետ. Հողատիրութիւնը Կովկասում. հետազօտութիւն—10 կ.

Մարքս Կարլ. Վարձու աշխատանք և կապիտալ, Թարգմ. Ստ. Շահումեան—10 կ.

Բաղդասարեան Ե. Ա. Էլէգիա - 35 կ.

Ֆեդորովիչ Ս. Ժողովրդական փողեր, Թարգմ. ռուսերէնից—5 կ.

Դանիէլբէգեան Ս. Կանանց հարցը և նրա ծագելու պատճառները—20 կ.

Շիրվանեան Ա. Թիապարտը, I և II մաս—1 ր. 25 կ.

Կարմելիւկ. Նոր լերան քարոզը, Թարգմ. ռուսեր. Տ.-Յ.—2 կ.

Կաուցկի Կարլ. Պետական Դուման, Թարգմ. Ռ. Դաշտօյեանի—3 կ.

Չերնօվ Վ. Գիւղացին և բանւորը որպէս տնտեսական կատէգօրիաներ, Թարգմ. ռուսերէնից Լ. Ն.—15 կ.

Գիւ-դը-Մօպասան. Մի կեանք. Լև Տօլստօյի յառաջաբանով, Թարգ. Ս. Տէր-Անանեան—1 ր.

Զալխուշեան Գր. Հայկական հարցը Ռուսաստանում, Թարգ. Ս. Նազարեան—15 կ.

Սպարապետեան Ար. Թւաբանական խնդիրներ և օրինակներ, պրակ ա.—30 կ.

394 1—2

ՀԱՅՐԵՆԻՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկա—տարեկան 1,50 դօլար

» վեց ամսեայ 0,75 »

Արտասահման—տարեկան 10 ֆրանկ

» վեց ամսեայ 6 »

Բաժանորդագինը կանխիկ

Հասցէ՝ The Hairenik Publishing C°
Beach St., Boston, Mass.